

25.830

Կրթ



ԳՅՈՒՂԱՑԻ-ԿՈՈՊԵՐԱՏՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ



Վ. Մ Ա Խ Ո Վ.

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ  
Յ Ե Վ  
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Թարգմ. Վ. ՓՈԹԵՑՍՆԵ



ՀՐԱՏԱՐ. Զ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ  
ՅԵՐԵՎԱՆ — 1924

334  
Մ-17

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

	Յերես
1. Ինչի մասին և խոսվում այս գրքույկում . . . . .	3
2. Ինչով և ապրում գյուղացին . . . . .	5
3. Գյուղացու «ոգնականները» առուձախի մեջ . . . . .	7
4. Ինչպես աղատվել «ոգնականներից» . . . . .	9
5. Կոոպերացիայի՝ գյուղացիական անտեսությանը աժամ առաջին ոգուտը . . . . .	10
6. Կոոպերացիայի՝ գյուղացիական անտեսությանը աժամ յերկրորդ ոգուտը . . . . .	14
7. Կոոպերացիայի մեղքերը . . . . .	16
8. Ինչպես կարող և գյուղացին ոգնել վարպետի կոոպերացիան մտքովի իր մեղքերից . . . . .	18
9. Կոոպերացիան և մերենաների մուտքը գյուղացիական տնտեսության մեջ . . . . .	20
10. Կոոպերացիան և հողի բարելավումը . . . . .	24
11. Կոոպերացիան և անասնապահության բարելավումը . . . . .	25
12. Կոոպերացիան և միջոցների կտրիքը . . . . .	27
13. Յեզրակացություն . . . . .	29

300  
1474-00

ԳԵԼԵԼ

ԳՅՈՒՂԱՑԻ-ԿՈՈՊԵՐԱՏՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Վ. ՄԱԽՈՎ



**ԿՈՈՊԵՐԱՑԻԱ**

Յ Ե Վ

**ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Թարգմ. Վ. ՓՈԹԵՅԱՆ

ՀՐԱՏԱՐ. Զ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ  
ՅԵՐԵՎԱՆ—1924

21 JUN 2013

# 1. ԻՆՁԻ՝ ՄԱՍԻՆ Ե ԽՈՍՎՈՒՄ ԱՅՍ ԳՐԲՈՒՑ-ԿՈՒՄ

Այժմ գյուղում վոչ միայն ամեն մի գյուղացի, այլ և համարյա յուրաքանչյուր պատանի գիտե, թե ինչ բան է կոոպերացիա ասածը: Կար ժամանակ, յերբ կոոպերացիայի մասին վոչ վոք վոչինչ չգիտեր և անհրաժեշտ եր յերկար խոսել՝ բացատրելու համար, թե ինչ է հասկացվում այդ բառի տակ: Այժմ այդպես չե: Մոտ չորս տարի առաջ կոոպերատիվ կար համարյա ամեն գյուղում, և ամեն մեկը սեփական փորձով գիտեր, թե ինչ է կոոպերատիվը, կոոպերացիան:

Ուստի այս գրքուկի մեջ մենք շատ բիչ կը խոսենք ընդհանրապես կոոպերացիայի, ինչպես և այն մասին, թե ինչ է անում նա և ինչի համար է հիմնված: Մենք ընդունում ենք, վոր այդ՝ մեր ընթերցող ընկեր, արդեն ծանոթ է, և կասենք միայն ամենաանհրաժեշտը:

Ավելի կարևոր է սհան թե ինչը: Գյուղացիները սովոր են մտածել, վոր կոոպերացիան մի առևտրական խանութ է, վոր ապրանք է ծախում և հում նյութեր հավաքում: Յերբեմն հենց այդպես էլ ասում են՝ «խանութ» և վոչ թե «կոոպերատիվ»: Այս վերջին տարիներում կոոպերացիան ներքուստ շատ այլևայլ կազմակերպչական թերություններ ու անկարգ վիճակ է ունեցել: Հաճախ գյուղացիներն անբավական են յեղել նրա կատարած աշխատանքից, նրանք կոոպերացիայից չեն տեսել ուղղակի և անմիջական ոգուտ իրենց և իրենց անտեսության համար:

Շատ անգամ ձեռք են քաշել նրանից և սկսել են

3715



41664-68

մտածել, թե լավ չէր լինի, արդյոք, յեթե կոոպերացիա-  
յի փոխարեն անուսուր աներ նախկին մասնավոր անու-  
տրականը, վաճառական կուլակը...

Այնպես վոր՝ յերբեմն կոոպերացիան (վոչ առանց  
նրա մեղքի) գյուղացու աչքում դարձել է մի հասարակ  
խանութ, այն ել՝ վատ, աղքատ ու անպետք խանութ:

Ինչ խոսք, վոր կոոպերացիայի մասին այդպես մը-  
տածելը ճիշտ չէ: Մենք ել հենց կամենում ենք այս  
գրքույկում ցույց տալ, թե ինչ է իսկական, լավ կազ-  
մակերպված կոոպերացիան, ինչ նշանակութուն ունի նա-  
գյուղացիական տնտեսության համար, ինչ ոգուտ կարող  
է բերել նա գյուղացուն, յեթե գործը կանոնավոր հիմ-  
քերի վրա դրված լինի:

Մեր նպատակն է նմանապես պատմել և՛ այն մա-  
սին, թե ինչ ձևով կոոպերացիան դարձնենք մի այնպիսի  
գործ, վոր մեծ ոգուտ բերի գյուղացիությանը: Ուրիշ  
խոսքով՝ ինչպես կազմակերպել կոոպերատիվը, վոր նա-  
կանոնավոր և ոգտակար կերպով գործի ամեն մի գյու-  
ղում:

Կոոպերացիային այժմ մեծ նշանակութուն են ստա-  
լիս: Նրա վրա ամենամեծ ուշադրությամբ է նայում  
բանվորագյուղացիական խորհրդային իշխանությունը և  
նրանից սպասում է ուժեղ և արագ աշխատանք հոգուտ  
խորհրդային տնտեսության: Մեծ ուշադրությամբ նրան-  
է նայում և՛ աշխատավոր ժողովուրդը, սպասելով, վոր  
նրա աշխատանքն անպայման բարելավի իր կենցաղն  
ու դրությունը:

Կոոպերացիայի աշխատանքներին է հետևում նայե-  
սպեկուլյանտների ու նեպաչների \*) բազմությունը, հե-  
տամուտ լինելով նրա բոլոր սայթաքումներին ու սխալ-

\*) Նեպաչ, նեպման—Նոր Տնտեսական Քաղաքականության  
ՆԵՊԻ հետևանքով առաջ յեկած մասնավոր անուտրականներ:

ներին, պատրաստ ոգտվելու նրա յուրաքանչյուր սխալ  
քայլից, ժողովրդական գրպանից իր ոգտին, իր նեպմա-  
նական գրպանի ոգտին վաստակներ կորզելու համար:

Կոոպերացիան, իրչպես ասացինք, կանգնած է այժմ  
ամենքին նկատելի տեղում, նա ամենքին տեսանելի յե,  
բոլորը նրա վրա յեն նայում, բոլորը՝ նրանից պահանջ-  
ներ ունեն:

Ուստի յուրաքանչյուր գյուղացի-կոոպերատոր պետք  
է ուշադրությամբ կարդա այս գրքույկը և ազատ ժա-  
մանակ պատմի իր համագյուղացիներին կարգացածի մա-  
սին, համոզի նրանց մտնել կոոպերացիայի մեջ, ամրա-  
պնդել նրան իրենց ուժերով և ջանալ նրա աշխատանքը  
դարձնել կանոնավոր և ոգտակար:

Մենք հետո հատկապես կը տեսնենք, վոր կոոպե-  
րացիայի գործում շատ բան կախված է գյուղացիների  
անմիջական մասնակցությունից և նրանց՝ գործին ուշա-  
դիր վերաբերմունք ցույց տալուց: Մեր գրքույկը պետք  
է ոգնի գյուղացիներին իմանալու—ինչպես վարել կոոպե-  
րատիվ գործը, վորպեսզի նրանից ոգուտ ստացվի գյուղա-  
ցիական տնտեսության համար:

## 2. ԻՆՉՈՎ Ե ԱՊՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Յեկեր փորձենք պարզել, թե ինչպես է վարում իր  
տնտեսությունը ամեն մի գյուղացի:

Ինչի՞ համար է գյուղացու տնտեսությունը. նրա  
համար, վորպեսզի ապրուստի միջոցներ հայթհայթի: Իր  
աշխատանքը, ուրիշ խոսքով՝ իր բանվորական ուժը և իր  
ընտանիքի ուժը նա գործադրում է հողի վրա:

Այդ հողը նա մշակում է իր ունեցած գործիքներով  
—արոր կամ գութան, փոցխ, շարքացան, գերանդի,  
հնձող մեքենա և այլն:

Ուրեմն, ամեն մի գյուղացիական տնտեսության մեջ  
կա.—1) տիրոջ և նրա ընտանիքի աշխատանքը, 2) հող,

3) արտադրութեան գործիքներ և լիճաններ: Մրանց թվին ե պատկանում նաև շենքերը:

Հին ժամանակ գյուղացին իր տնտեսութունն այնպէս եր կազմակերպում, վոր այն ամենը, ինչ վոր հարկավոր եր, կարելի լիներ ստանալ նրա՝ հողի վրա թափած աշխատանքի շնորհիվ: Գյուղացին արորն ել եր ինքը շինում, փոցին ել, ուտելու հացը նա ստանում եր իր հողից, շապիկը նրան տալիս եր նրա իսկ արտը, ուր նա կտավատ եր ցանում, վոչխարից ստացվող բուրդը գործ եր անում շորեր և թաղիքե կոշիկներ պատրաստելու համար: Մի խոսքով ինչ վոր գյուղացուն պետք եր, նա ստանում եր իր սեփական տնտեսութեան մեջ, սեփական (կամ իր ընտանիքի) աշխատանքը գործադրելով:

Սակայն այդպէս եր նախկին տարիներում: Նրանից հետո շատ բան ե փոխվել, և այժմ գյուղացին այլևս յերբեք ամեն ինչ իր տնտեսութունից չի ստանում: Տնտեսութունից նա ստանում ե հաց, կաթ, յուղ, ձու, միս և անդառութեան այլ մթերքներ: Սակայն իրեն անհրաժեշտ շապիկն ու կոշիկները, կնոջ թաշկինակն ու շորերը, անդրջրհեղեղան արորին փոխարինած գութանը, գերանդին, կացինն ու սղոցը ձեռք բերելու համար գյուղացին այժմ գնում ե քաղաք և այնտեղ առնում այդ անենը:

Մեր որերում սերտ կապ ե ստեղծվել գյուղացիական տնտեսութեան և քաղաքի, քաղաքային արդյունաբերութեան միջև: Այժմ գյուղն առանց քաղաքի չի կարող ապրել. ասենք՝ քաղաքն ել առանց գյուղի կառավարվել չի կարող:

Այս հանգամանքը շատ կարևոր ե:

Իսկ ինչո՞վ գնել: Գնելու համար փող ե հարկավոր. վորտեղից փող ձարել: Այլ կերպ փող ձարել չեա կարող, բայց յեթե վորեւե բան՝ հացահատիկ, յուղ, կտավատ, աղվամաղ, բուրդ և մի վորեւե այլ բան ծախելով:

Ապրելու համար գյուղացին պետք ե ծախի իր ձեռքով պատրաստածի և մայր-հողից ստացածի մի մասը, իսկ ստացած փողը գործ դնի հարկավոր բաները գնելու համար:

Այդպէս ել ապրում ե գյուղացին: Գարնանը նա վարում ե, ցանում և փոցխում, ամառը—հնձում, հավաքում, աշնանը—ծեծում, քամում ե լավ յեկած հացահատիկը, աշնանացանն ե կատարում և այլն: Իսկ բերքը ծեծելուց հետո գյուղացին միշտ ծախում ե ավելցուկը (բացի իր սեփական կարիքի համար անհրաժեշտ հացից) և ստացած փողով գնում ե իր և տնտեսութեան համար անհրաժեշտ բաները:

### 3. ԳՅՈՒՂԱՑՈՒ «ՈԳՆԱԿԱՆՆԵՐԸ» ԱՌՈՒԾԱԽԻ ՍԵՋ

Ո՞ւմ ե հարկավոր գյուղացու տարեկանը (рожь): Հարուստն ուտում ե ցորենի սպիտակ հաց, իսկ տարեկանի հացն ուտում ե քաղաքի բանվորը: Յեւ ինչ. գյուղացին տարեկանը հենց ուղղակի ծախում ե բանվորին: Ինչպէս չե: Այդպիսի կարգ յերբեք չի լինում: Գյուղացու համար դժվար ե անմիջական կերպով իր տարեկանը բանվորին ծախել, ինչպէս վոր բանվորի համար դժվար ե գտնել այն գյուղացուն, վորից կարելի յե տարեկանի ալյուր առնել:

Յեւ, անհ, դրա փոխարեն այսպէս ե լինում-գյուղացու տարեկանը կը գնի ապրանքառուն—ապրանք հավաքողը. կը գնի որինակ՝ փութը 40 կոպեկով: Իբրև վարձ այն բանի, վոր նա «ոգնեց» գյուղացուն ծախել իր տարեկանը, ապրանքառուն ամեն մի փթի վրա կը գա 5 կոպ. և տարեկանը կը ծախի ավելի մեծ վաճառականին՝ փութը 45 կոպեկով: Վաճառականը ևս, վորպէս իր աշխատանքի վարձ, կավելացնի փթին մի 10 կոպեկ, այնպէս վոր՝ մեծավաճառ առևտրականի ձեռքը տարեկանը կը հասնի

արդեն փութը 55 կուպեկով: Մեծավաճառ առևտրականը մի բան ավելիով տարեկանը կը ծախի գործարանատեր — աղացատիրոջը, վերջինը կաղա տարեկանը, ալյուրը կը ծախի ալրավաճառին, սա յեւ ալյուրի գնի վրա մի փոքրիկ բան կավելացնի, և կը ստացվի այն, վոր տարեկանի ալյուրը կը հասնի բանվորի ձեռքը վոչ թե 40, այլ 80 կուպեկով, յերբեմն նույնիսկ 1 ուրբով և ել ավելի թանգ գնով:

Ուրեմն՝ գյուղացու արտադրած և շուկայում վաճառած հացը բանվոր — սպառողին և հասնում վոչ թե ուղղակի ճանապարհով, այլ շրջան գործելով, մասն ու մեծ վաճառականների, միջնորդների միջոցով:

Գյուղացու այդ «ոգնականները», վոր նրան «ոգնում են» հացը վաճառելու գործում, շարունակ աշխատում են հացահատիկը գյուղացուց գնել ամենաեթան գնով: Գյուղացին շարունակ տուժում է այդ տարբերութունից:

Յեթե նա ծախեր առանց այդ «ոգնականները», ապա ավելի ոգուտ կը ստանար: Սակայն «ոգնականները» իրլում են գյուղացու գրպանից հացի՝ շուկայի գնի մի մասը և գնում իրենց լայն քսակը:

Այդպես եր մեզանում ամեն տեղ մինչև հեղափոխութունը: Սակայն դրությունն այժմ ել այդպես է այն տեղերում, վորտեղ գյուղացիները հացը ծախում են մասնավոր մարդկանց — մասնավոր ապրանքառուներին:

Յեթե այդ կտրիճները՝ մասնավոր ապրանքառուներն այդ ձևով «ոգնում են» գյուղացուն՝ հացահատիկը, ձուն և ուրիշ մթերքներ ծախելու գործում, ապա այդ նույն ձևով ել «ոգնում են» նրան գնելու իր և տնտեսության համար կարևոր ապրանքները: Յենթադրենք այսպես. — ամեն տեսակ ապրանք (և չիթը, և մահուղը, և կոշիկները, և գերանդին, և գութանը և այլն) բանվորները պատրաստում են Սորհրդային Միության պետական գործարաններում: Գյուղացին այդ ապրանքներն ստանում է վոչ ան-

միջապես գործարանից: Ապրանքն սկզբում գնում է սինդիկատը (գործարանների առևտրական միություն), ապա սինդիկատից նա ընկնում մեծավաճառ առևտրականի ձեռքը, ապա չարչու ձեռքը, իսկ այդ վերջինից արդեն կընկնի գյուղացու ձեռքը: Ինքնին հասկանալի յե, վոր վաճառականները քնած չեն, յուրաքանչյուրն իր հերթին ապրանքի գնի վրա ավելացնում է ուրբլուն մի քանի կուպեկ, այնպես վոր վերջիվերջո ապրանքը հասնում է գյուղացուն կրկնակի, իսկ յերբեմն ել յեռակի գնով:

### ԻՆՉՊԵՍ ԱԶԱՏԿԵԼ «ՈԳՆԱԿԱՆՆԵՐԻՑ»

Պարզ բան է, վոր այդ «ոգնությունը» վոչ վորի գյուր չի գա: Յեվ ում ել կարող է դյուր գալ, յեթե նրա գրպանից ամենահանգիստ, որինական յեղանակով հանում են ծանր աշխատանքով դատած փողը: Պեսք է մտածել, թե ինչպես ազատվել այդ տեսակ «ոգնությունից» և ինչպես միանգամ ընդմիշտ հեռացնել «ոգնականներին»:

Այդ ոգնականները փայտոջիլի (КЛОП) պես մի բան են: Չե՛ վոր փայտոջիլներն ել են ոգնում մարդուն քնելու, և ծծում են նրա արյունն ու տըռզում: Փայտոջիլի դեմ կովելու լավ միջոց է պարսկական փոշին, իսկ առևտրի ասպարիզում գործող «ոգնականները» նկատմամբ այդ փոշին — կոպերացիան է:

Իսկապես՝ միթե գյուղացիները չեն կարող համախմբվել և կոոպերատիվներ հիմնել, հավաքել շրջանառության համար թեկուզ փոքր դրամագլուխ, իսկ հետո այդ դրամագլխի միջոցով վաճառել իրենց մթերքները և քաղաքում առաջին ձեռքերից գնել անհրաժեշտ ապրանքը: Կարելի յե գործել այնպես, ինչպես վաճառականները, միայն ստացվող վաստակը բաժանել գյուղացի անդամների միջև, կամ գործադրել հանրոգուտ նպատակներով: Ահա հենց դրանով ել զբաղվում է կոոպերացիան: Նա հենց մի այնպիսի կազմակերպություն է, վոր հիմնվում է անմիջապես գյուղա-

ցիւտերի ձեռքով նրա համար, վորպեսզի նրանք իրենք վարեն առևտրական գործը, իսկ ամեն տեսակ «ոգնական» — միջնորդներին յոթ վերստ հեռու քշեն գյուղական տընտեսութեանից:

Սովորաբար այսպես են անում. իրար հետ համաձայնութեան են գալիս 50-100 գյուղացի, վճռում են հիմնել կոոպերատիվ՝ հարկավոր ապրանքները գնելու և գյուղացիական անտեսութեան մեջ արտադրվող ամեն տեսակ մթերքները վաճառահանելու համար (СОВЕТ): Ամեն մի անդամից գանձում են յերկուսական, յերեքական ուրբի և կազմում են փայերի դրամագլուխ, ընտրում են վարչութիւն, մտնում են կոոպերատիվ միութեան մեջ, և արդեն գործը կարգի յե ընկած: Կոոպերատիվն ել այնպէս և առևտուր անում, ինչպես և ամեն մի վաճառահան: Նա, որինակ, հացահատիկը գյուղացուց գնում և այն գնով, ինչ զին վոր շուկայում և գոյութիւն ունենում և նրան ապրանքները ծախում և շուկայի գնով: Սակայն զանազանութիւնն այստեղ այն և, վոր վաճառականը ստացած ոգուտը գնում և սեփական զբաղանը, իսկ կոոպերատիվի ոգուտը մնում և գյուղացիութեան ձեռքին, նրա տրամադրութեան տակ և նրանից չի հեռանում ու ուրիշ վորեվե մեկի ձեռքն ընկնում: Կոոպերատիվի միջոցով առևտուր անելու զեպքում նեպաչներն ու կուլակներն արդեն այլեվս չեն ոգավում գյուղացու զբաղանի հաշվին: Նրանք մի կողմ են քաշվում և միայն նայում են, թե ինչ անեն, վոր ոգավեն կոոպերատիվի վորեվե սայթաքումից կամ սխալից և զբանից գեթ մի փոքր բան վտտակեն:

##### 5. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ՝ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՏՎԱԾ ԱՌԱՋԻՆ ՈԳՈՒՏԸ

Այսպիսով, յեթե կազմակերպվում և կոոպերատիվ, ապա նրա՝ գյուղացիական անտեսութեան համար ունե-

ցած ոգուտը միանգամայն պարզ և դառնում: Գյուղացին պետք և գնի (որինակի համար) 10 արշ. չիթ: Ուղղակի գործարան գնալ նա չի կարող, ուստի անկարող և չիթը գործարանային գնով առնել. յեթե կոոպերատիվ չկա, գյուղացին կը գիմի մասնավոր վաճառականի խանութը, կը վճարի նրան չիթի գործարանային արժեքը (ասենք՝ 18 կոպ.) և այդ գործարանային արժեքի ու շուկայի գնի միջև յեղած ամբողջ տարբերութիւնը: Այդ տարբերութիւնն ամբողջովին, չնչին բացառութեամբ, կը մտնի յեթե վոչ մի՝ ապա մի քանի վաճառականի զբաղան, և գյուղացին ի զուր տեղը ավելորդ վճարած այդ փողը յերբեք յետ չի բերի:

Ուրիշ բան և ստացվում, յերբ գյուղացիներն իրենց գյուղում կոոպերատիվ են հիմնում. նախ և առաջ կոոպերատիվի միջոցով նրանք կարող են մեծ քանակութեամբ ապրանք գնել, իսկ այդ արդեն ինքնընտանեցան և ժանացնում և ապրանքը, Սյուտհետեվ՝ կոոպերատիվի միջոցով գյուղացիները հնարավորութիւն ունին ապրանքներն առաջին ձեռքերից (պետական սինդիկատից) կամ իրենց միութիւնից գնելու: Իսկ այդ հանգամանքն իր հերթին պետք և եժանացնի ապրանքները: Այսպիսով՝ կոոպերատիվից ստացվող ոգուտը պարզ և: Սակայն այդ քիչ և: Կոոպերատիվի միջոցով ել գյուղացին չի կարող ապրանքը գնել գործարանային գնով. գործարանային գնի վրա կոոպերատիվը, ի հարկե, վորոշ հավելում կանի իր ծախսերը ծածկելու համար և զուցե մի բան ել ավելի, քան անհրաժեշտ և ծախսերը ծածկելու համար. այդ բոլորն այդպես և, բայց, անա, տարվա վերջին կոոպերատիվի վարչութիւնը հաշվում և իր ոգուտն ու վնասը: Հաշվից պարզվում և, վոր ապրանքները վորոշած գներով ծախելու շնորհիվ գյուղացիներից 500 ուրբի ավելի յե ստացված: Յեթե այդ վատտակն ստանար վաճառականը, նա կուրախանար և բավականութեամբ այդ

գումարը գրպանը կը դնեն: Կոոպերատիվում այդպես չէ. գումարվում է կոոպերատիվի ընդհանուր ժողով, վարչութիւնը հաշիվ է ներկայացնում և կոոպերատիվի անդամներն իրենք կարող են բաշխել ստացված վաստակը, կարող են վորոշել յետ տալ այդ վաստակը անդամներին: Այսպիսով ոգուտը կը կնակի յե, նախ՝ կոոպերատիվի միջոցով կարելի յե ապրանքներն ավելի եժան գնով ձեռք բերել, իսկ յերկրորդ՝ գների մեջ ավելի վերցրած գումարը կարելի յե կրկին վերագործնել գյուղացու գրպանը և հենց գրանով էլ ավելի իջեցնել ապրանքի այն դինը, վորով գյուղացին գնել է կոոպերատիվից:

Յեթե ի նկատի ունենանք մի գյուղացիական տնտեսութիւն, ապա այդ ոգուտների ընդհանուր գումարը հազիվ թե առանձնապես մեծ լինի. վերցնենք, որինակ, մի գյուղացիական տնտեսութիւն, վորի տերը, վորպես կոոպերատիվի անդամ, տարվա ընթացքում 30 ուրբու ապրանք է վերցրել: Կոոպերատիվը իր անդամներին շարունակ ապրանքը ծախել է շուկայի գնից 10 տոկոս պակաս. այդպիսով կը տեսնենք, վոր մեր գյուղացին տարվա ընթացքում կոոպերատիվից 3 ուրբու ոգուտ է ստացել: Տարվա վերջին կոոպերատիվը հաշվեց իր ոգուտն ու վաստը և պարզվեց, վոր 500 ուրբու վաստակ է ունեցել:

Անդամները վորոշեցին այդ վաստակը բաժանել անդամների մեջ, վորպես մրցադրամ՝ (премия) վերցրած ապրանքների համար, յենթադրենք՝ վերցրած յուրաքանչյուր ուրբու ապրանքին ընկավ 5 կոպեկ: Մեր գյուղացին ստացավ գրանից 1 ու 50 կոպեկ:

Ուրեմն, ընդամենը կոոպերատիվից նա շահվեց 4 ու 50 կոպ.: Այդ, իհարկե, շատ մեծ բան չէ, թեև գյուղացիական տնտեսութիւն համար այնուամենայնիվ ելի մի բան է:

Բայց հաշվենք այդ ոգուտը ամբողջ գյուղացիութիւն նկատմամբ. այս դեպքում արդեն շատ մեծ գումար կը ստացվի: Այսպես, որինակ, սպառողական կոոպերացիան 1923 թ. գյուղացիներին մատակարարել է ավելի քան 100 միլիոն ուրբու (վոսկով) ապրանք: Համարյա ամենուրեք կոոպերատիվներն իրենց անդամներին 10 տոկոս դեղջ են արել: Յեթե մենք ընդունենք, վոր 160 միլիոնի ապրանքի կեսն է անդամներին ծախված, ապա կը ստանանք, վոր կոոպերացիայի շնորհիվ գյուղացիութիւնը 5 միլիոն ուրբու (վոսկով) խնայողութիւն է արել: Այդ գումարը մոտավոր է, սակայն նա ցույց է տալիս, թե կոոպերացիան վորքան մեծ ոգնութիւն կարող է ցույց տալ գյուղացիական տնտեսութիւնը:

Չեմք յեթե չլինեն կոոպերացիան, այդ ամբողջ 5 միլիոն ուրբուն գյուղացիների գրպանից կը հոսեր դեպի նեպաչներն ու կուլակները: Այստեղից պարզ է, թե կոոպերացիան վորքան կարեւոր է գյուղացիութիւն համար:

Սակայն այդ դարձյալ քիչ է... Մասնավոր առևտրականը շատ լավ գիտե հասարակ ժողովրդի աչքին թող փչել, յերբեմն նա այլիսի խորամանկ միջոցների կը դիմի, վոր վոչինչ չես հասկանա: Պատահում է նույնիսկ այնպես, վոր մասնավոր առևտրականն սկսում է ավելի եժան ծախել, քան սպառողական խանութը: Յերբ այսպիսի բան է տեղի ունենում, տես, թե վորտեղ է խաբեյութիւնը, այստեղ արդեն անպայման մի վորեք խաբեյութիւն կա. կամ առևտրականը ապրանքի քաջն է կեղծում, կամ նա վատ ապրանք է ծախում, համենայն դեպս՝ միշտ մի բան կա:

Յեվ միշտ մասնավոր առևտրականը մեծ ցանկութիւն ունի վորեք ձեզով գնորդին խաբելու: Հին վաճառականները նույնիսկ մի այսպիսի կանոն էլ ելին մշակել. «Չխաբես—չես ծախի»: Կոոպերացիան մեկ էլ նրա-

նով ե լավ գյուղացու համար, վոր նրա վրա կարելի յե վստահ լինել. և՛ սպրանքի քաշն ուղիղ կը լինի, և՛ վորեկե խաբեյություն ել չի կարող տեղի ունենալ կոտպերատիվ խանութում: Յեվ տարորինակ ել կը լինեն, յեթե ուրիշ կերպ լինեն, չե՛վոր այդ դեպքում դուրս կը գար, վոր անդամներն իրենք իրենց են խաբում՝ չե՛ վոր սպրանքները հենց անդամների համար են ձեռք բերվում, նրանց ել վաճառվում են՝ ել ինչո՞ւ ինքն իրեն խաբել:

Յեթե այս բոլորը, վոր մենք իմացանք, ի մի գումարենք, այն ժամանակ ամեն մի գյուղացու հասկանալի պետք ե լինի, վոր կոտպերացիայի՝ գյուղացիական տընտեսությանը տված ոգուտը շատ զգալի յե:

**6. ԿՈՒՊԵՐԱՑԻԱՅԻ՝ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՏՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ ՈԳՈՒՏԸ**

Կոտպերացիայի՝ գյուղացիական տնտեսությանը տըված յերկ օրդ ոգուտն ստացվում ե նմանապես կոտպերատիվի առևտրական գործերից: Բայց այս անգամ ոգուտն ստացվում ե ամեն տեսակ մթերքների՝ հացահատիկի, յուղի, ձվի, կտավատի և մյուսների վաճառքից, կամ, ինչպես ասում են, վաճառահանությունից:

Մենք արդեն ասացինք, թե սպեկուլյանտները, նեպաչները, կուլակներն ու մյուսներն ինչպես են «ոգնում» գյուղացուն մթերքները վաճառելիս:

Կոտպերացիայի միջոցով պետք ե աշխատել խուսափել այդպիսի «ոգնության» անհրաժեշտությունից: Յեվ կոտպերատիվն, իրոք, շատ ե նպաստում, վոր գյուղացիների վզից վերցվի այն լուծը, վոր դնում են միջնորդները, առևտրականները՝ կուլակները, սպրանքառուները, ամբարգալները, չարչիներն ու մյուսները:

Ինչպե՞ս ե հասնում դրան կոտպերացիան: Ահա թե ինչպես: Լավ կազմակերպված կոտպերատիվներում վար-

չությունը կատարում ե, այսպես կոչված՝ վաճառահանության կոմիսիոն գործարքներ (операция по сбыту): Այդ նշանակում ե, վոր գյուղացիության տնտեսության վորելե արդյունք, ասենք՝ տարեկան, վարսակ, ցորեն, կոտպերատիվն ընդունում ե կոմիսիոն հիմունքներով ծախելու համար, այսինքն՝ յուրաքանչյուր ցանկություն ունեցող գյուղացի իր հացահատիկը հանձնում ե կոտպերատիվին և հանձնարարում ե վարչության վաճառել այդ հացահատիկն ամենահարմար ժամանակ և ամենաձեռնաուպայմաններով: Վորովհետև սովորաբար գյուղացու համար շատ դժվար ե սպասել մինչև հացահատիկի վաճառելը (ստացվելիք փողով պետք ե հարկեր վճարել, կամ տնտեսության համար անհրաժեշտ բաներ գնել), ուստի ընդհանրապես, հացահատիկը կոմիսիայով տալիս գյուղացին հացահատիկը գրավ ե դնում կոտպերատիվում և այդ գրավ դրածի հանդեպ կոտպերատիվից ստանում ե մոտավորապես այդ հացահատիկի շուկայի արժեքի չափ մի գումար: Այնուհետև կոտպերատիվը ծախում ե այդ հացահատիկը, վորոշ գումար փող ե հանում, և յեթե պարզվում ե, վոր հացահատիկն ավելի բարձր դնով ե ծախված, քան այն, վորով նա գրավ եր ընդունված, այդ դեպքում կոտպերատիվն ամբողջ տարբերությունը տալիս ե գյուղացուն, դուրս գալով իր ծախսերի համար շատ փոքր տոկոս: Այսպիսի կոմիսիոն գրավի գործարքներ կարելի յե կատարել գյուղացու աշխատանքի արդյունք՝ ամեն մի մթերքի նկատմամբ: Միբիրում, որինակ, շատ հաջող կերպով այդպիսի գործարքներ են կատարում մորթու (пушнина) նկատմամբ: 1923 թ. այնտեղ կոտպերատիվները սկիւռի մորթի հանձնողներին լրացուցիչ կերպով տվել են ամեն մի հանձնած մորթու համար 1 ու. 10 կ. (Նովո-Նիկոլայեվկայի նահ.): Յեթե, որինակ, գյուղացին հանձն լ ե 10 հատ մորթի, ապա հանձնելիս նա ստացել ե հատին 50 կոպ., այսինքն ընդամենը 5 ուրբլի: Մոր-

թիւներն անցել են արտասահման, այնտեղ ծախվել, և փողն այնտեղից ստացվել և. և, անա, գյուղացին լրացուցիչ կերպով ստանում է յուրաքանչյուր մորթուն 1 ու. 10 կոպ., ընդամենը 11 ուրբի:

Ի՞նչ ասել կուզի, վոր այդ շատ մեծ ոժանդակութիւն է տնտեսութեան համար: Դեպքեր են յեղել, յերբ հանձնված յուրաքանչյուր 5 փութ տարեկանի համար սորվել է լրացուցիչ մի փութ տարեկան, այսինքն՝ գյուղացին շուկայի գնի համեմատութեամբ, ամեն մի փթիւն շահվել է 8 ֆունտ. ծախում է մի փութ, իսկ ստանում է 48 ֆունտ: Յեթե այժմ հաշվենք, թե ինչքան այգապի սեղան է ստացվում ամբողջ գյուղացիութեան համար, ապա մենք կը ստանանք մեծ թեւեր—գարձյալ միլիոնավոր ուրբիներ վոսկով: Չիներ կոոպերացիան՝ այդ ամբողջը կը գնար կուլակ դասակարգի անհատակ գրպանը և գյուղացիութեան համար անհետ կը կորչեր: Իսկ կոոպերացիան յեռանդով պաշտպանում է գյուղացիութեան շահերը և կոպեկ-կոպեկ մեծ միլիոններ խնայողութիւն է անում գյուղացիներէ համար:

### 7. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԵՂՔԵՐԸ

Այս բոլորին կարող են առարկել, թե այդ ամենը թղթի վրա շատ սահուն և լավ է դուրս գալիս, իսկ թե ինչ է ստացվում իրական կյանքում այդ ուրիշ բան է: Պատահում է, վոր կոոպերատիւները շուկայից ավելի թանգ գնով առևտուր են անում, պատահում է, վոր նրանք կոմիսիոն վաճառքի փոխարեն գյուղացու հում մթերքը գնում են շատ եժան և գյուղացուն քամում են վոչ պակաս, քան կուլակը:

Մենք չենք հերքի, վոր այդ բոլորը լինում է: Ամեն տան մի ծուռ կը լինի: Յերբեմն մի քոսոտ այժն ամբողջ հոտի անունն է խայտառակում: Կան կոոպերատիւներ, վոր կուլակից ել վատ են: Բայց այն հանգամանքը, վոր

այգապիսի կոոպերատիւներ կան, մի բան է միայն ցույց տալիս՝ պետք է անհապաղ այդ կոոպերատիւները ջնջել և խորհրդային Միութեան յերկրի յերեսից: Նրանց դեմ պետք է վճռական պատերազմ հայտարարվի, և նրանք կամ պետք է փոխեն իրենց եյությունը, կամ անհետ կորչեն:

Այժմ կոոպերացիայի աշխատանքներին ուշադրութեամբ հետևում է խորհրդային Իշխանութիւնը: Ամբողջ կոոպերացիան այժմ ապակե ծածկոցի տակ է դրված. ուստի լիակատար վստահութիւն կա, վոր կոոպերատիվ հոտի մեջ քոսոտ այժեր բոլորովին չեն լինի: Նրանց վոչնչացնելու գործում մեծ և շատ մեծ դեր պատկանում է հենց իրենց, գյուղացիներին: Սակայն այս մասին մենք կը խոսենք ցածում:

Կոոպերացիան մի ուրիշ մեղք էլ ունի: Վերևում մենք պատմեցինք, թե ինչպես ապրանքը գործարանից մեծ ու փոքր վաճառականների միջոցով ճանապարհորդում է դեպի գյուղացին: Այդ մեղքից կոոպերացիան ել ազատ չեր: Ապրանքը ճանապարհորդում եր այսպիսի գործարանից—սինդիկատ, սինդիկատից—կենտրոնիութիւն (սպառող. ընկերութիւնների միութիւնների միութիւն), կենտրոնիութիւնից—նրա բաժանմունքերը կամ գրասենյակը, գրասենյակից կամ բաժանմունքից—նահանգական միութեան բաժանմունքը կամ գրասենյակը, նահանգական միութեան բաժանմունքից—կենտրոնական կոոպերատիվը, կենտրոն. կոոպերատիվից—նրա բաժանմունքը, և միայն կենտրոն կոոպերատիվի բաժանմունքից ապրանքը հասնում էր գյուղացուն: Պարզ է, վոր ապրանքի այդ շարժման հետևանքով նրա գինը, վերագիր ծախսերի շնորհիվ, կրկնակի ու յեռակի աճում եր:

Այդ կոոպերատիվի շատ մեծ մեղքերից է, բայց, բարեբախտաբար, ներկայում կոոպերացիան այդ մեղքը

1003  
1926



քանակը եւ Այժմ ապրանքի ճանապարհի միջանկյալ ետապ-  
ները վոչնչանում են:

Կոոպերատիվը կարող է ապրանքը գնել թեկուզ հենց  
անմիջապես սինդիկատից, թեկուզ կոոպերատիվների  
շրջանային միութիւններից, թեկուզ՝ կենտրոնացվածներից:

Այսպիսով հնարավորութիւնն է ստեղծվում ապրան-  
քաշրջանառութիւնը կատարել առանց ավելորդ վերադիր  
ծախսերի, ուստի և կոոպերատիվ առևտրի ասպարեզում  
ապրանքների գներն ուժեղ կերպով իջնում են:

Այստեղ, կրկնում ենք, կոոպերացիան նկատել է իր  
պակասութիւնը և այժմ վճռական կերպով աշխատում է  
վերացնել այն: Արդեն այս ընթացիկ (1924) տարում  
պետք է սպասել, վոր այդպիսի անհեթեթ դրութիւնն մե-  
զանում այլևս չի լինի:

### 8. ԻՆՁՊԵՍ ԿԱՐՈՂ Ե ԳՅՈՒՂԱՑԻՆ ՈԳՆԵԼ, ՎՈՐ- ՊԵՍՁԻ ԿՈՊԵՐԱՅԻԱՆ ՄԱՔՐՎԻ ԻՐ ՄԵՂՔԵՐԻՑ

Վերևում մենք խոստացանք ասել, թե ինչպես և  
ինչո՞ւ կոոպերատիվ առևտուրը կանոնավորելու գործում  
մեծ դեր պետք է խաղա ինքը, գյուղացին:

Ինչո՞ւ: Վորովհետև կոոպերացիան անտեսութիւնն է  
և նրա տերը հանդիսանում են գյուղացիները՝ նրա ան-  
գամները: Ի՞նչ կը լինի անտեսութիւնը, յեթե բացակա-  
յում է տերը. նա կը քայքայվի: Յեթե գյուղացիները  
չսկսեն վարել կոոպերացիայի անտեսութիւնը, ապա այն  
ժամանակ վերջինը ևս կը քայքայվի, կը սկսի վատ աշ-  
խատել, հետզհետե ավելի կը շատանան բոսոտ այծերը  
— բոլորովին անպետք կոոպերատիվները: Հենց դրա հա-  
մար ել կարևոր է, վոր կոոպերատիվի տերը—աշխատա-  
վոր գյուղացիութիւնը շարունակ կառավարի կոոպերա-  
տիվ գործը: Յե՞վ կարելի յե ասել՝ վորքան շուտ ամեն մի  
գյուղացի սկսի ուշադրութեամբ վերաբերվել դեպի կոո-  
պերատիվի գործերը, այնքան ել կը կանոնավորվեն այդ

գործերը, և կոոպերատիվը կը սկսի հետզհետե ավելի ու  
ավելի լավ աշխատել:

Իսկ ի՞նչ պետք է անի գյուղացին, վորպեսզի կոո-  
պերացիայի տերը դառնա: Ահա թե ինչ պետք է անել.

1) Ամեն մի գյուղացու հարկավոր է անդամավճար  
մուծել և դառնալ կոոպերատիվի անդամ:

2) Իր կնոջն անդամագրել կոոպերատիվին, վորով-  
հետե՞վ կինը շատ բան կարող է անել կոոպերացիայի  
աշխատանքները բարելավելու համար: Նա ավելի շատ  
է շահադրգոված, վորպեսզի եժանանան աղը, սալոնը,  
ասեղը, թելը, լուցկին և տնային գործածութեան հա-  
մար կարելիոր մյուս մանր-մունր իրերը: Կոոպերատիվի  
անդամ լինելով՝ կինն ավելի լավ կարող է ազդել  
կոոպերատիվի վրա, վորպեսզի նա կանոնավոր առե՞վ-  
տուր անի:

3) Պետք է հետաքրքրվել կոոպերատիվի բոլոր գոր-  
ծերով և անպայման հաճախել անդամների ընդհանուր  
ժողովը:

4) Ժողովներում պետք է վարչութիւններից պահանջել  
մանրամասն հաշիվ կոոպերատիվի գործերի և նրա աշ-  
խատանքների մասին: Յեթե վորե՞վե բան դիտես, յեր-  
բեք չպետք է լռես, պետք է ամեն բան ասել ժողովին,  
նա կը պարզի, թե ո՞վ է արդար, ո՞վ մեղավոր: Յեթե  
նա կը վորե՞վե բանից դժգոհ ես, դարձյալ պետք է պարզ խո-  
սել և վոչ թե անկյուններում ու կամացուկ փսփսալ:

5) Կուլակներին և ունեւորներին պետք է վզակոթին  
տալով դուրս վռնել կոոպերատիվից, վորպեսզի նրանց  
հոտն անգամ կտրվի: Վարչութեան անգամ պետք է  
քնտրել միայն աղքատ և միջակ գյուղացիներին: Կուլա-  
կին ու հարուստին չի կարելի վարչութեան մեջ թողնել,  
ինչպես վոր չի կարելի այժի՞ն բանջարանոց թողնել:

6) Վարչութեան անգամ պետք է ընտրել շնորհքով,

խելացի և մաքուր մարդկանց, վորպեսզի հմտորեն և ա-  
մուր կերպով պաշտպանեն կոսպերատիվ գործը:

7) Յերբեք չպետք է մտածել, թե յեթե վարչու-  
թյուն են ընտրել, ապա ուրեմն նա ինքն ել ամեն ինչ  
կը կարգավորի: Պետք է միշտ պատրաստ լինել ոգնելու  
կոսպերատիվին և նրա վարչությանը թե աշխատանքով,  
թե խորհրդով և թե միջոցներով:

Ահա, յեթե յուրաքանչյուր գյուղացի պահի այս  
պատվիրանները, այն ժամանակ, թեյեվ գյուղացին քա-  
հանա չի, ստկայն հենց միայն դրանով կը մա-  
քրի կոսպերատիվը նրա՝ յերբեվիցե գործած վորեն  
մեղքերից ու գյուղացիության հանդեպ կատարած հան-  
ցանքներից: Ամեն մեկը պետք է հասկանա, վոր ամբողջ  
այստեղ ասվածը բացարձակ իսկություն, ճշմարտու-  
թյուն է:

Այդ ճշմարտության համաձայն ել պետք է վարվել:

9. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այժմ շարունակենք պարզել այն հարցը, թե կոսպե-  
րացիան ինչ ոգուաներ կարող է տալ և իրոք տալիս է  
գյուղացիական անտեսության: Մեր ուշադրությունը  
դարձնենք ահա թե ինչի վրա:

Կար ժամանակ, յերբ գյուղացին հողը վարում էր  
իր շինած արորով: Այդ ժամանակը համարյա արդեն  
անցել է: Այժմ գյուղացին վարում է գութանով: Իրա-  
շնորհիվ հողը լավացել է, գյուղացին ավելի քիչ ջանք է  
գործ դնում աշխատանքի ժամանակ, ավելի քիչ է հոգ-  
նեցնում իր ձիուն: Ինչպես վոր ձիունտու յե արորը  
գութանով փոխարինել, այնպես ել ձեռնտու յե սերմը  
կտից ձեռքով վերցնելու և շող տալու փոխարեն՝ ցա-  
նել շարքացանով: Շարքացանը անտեսում է և՛ աշխա-  
տանքը, և՛ ժամանակը, և՛ սերմը: Նրանով մի դեսյատին

տեղն անհամեմատ ավելի շուտ կարելի յե ցանել, քան  
ձեռքերով: Շարքացանով ցանելու դեպքում ձիւերը դուրս  
են գալիս հավասար կերպով, հատիկները խորն են ընկած  
լինում հողի մեջ բույսն ել այնպես յենթակա չի յե-  
րաշտի, ինչպես պապական ձեվով ցանելու դեպքում:  
Մի խոսքով՝ շարքացանի տված ոգուտը շատ մեծ է:

Այդպես ել մյուս մեքենաները—ձիու փոցի և խոտ-  
հար, հնձող, կալսող, քամհար ու վորոմնահան մեքենա-  
ներ և այլն: Այդ մեքենաներից յուրաքանչյուրի՝ գյու-  
ղացիական անտեսությանը տված ոգուտը հակայական է:  
Հարկավոր է մտածել, թե դրանցից ամեն մեկը վորքան  
է անտեսում գյուղացու աշխատանքը: Այ, որինակ՝ վո-  
րոմնահանը,—առանց նրա յերբեք արտը չես կարող մաք-  
րել վորոմից, տարեցտարի այդ գեղեցիկ աղբախոտը կըս-  
կսի բազմանալ և փչացնել գյուղացու հացահատիկը, դաբ-  
ձնելով նրան զիբլոտ, ուտտի և եժան: Իսկ յեթե համե-  
մատենք թակով կամ կամով ձեծելը ձիաշարժ կամ շո-  
գեշարժ մեքենայով կալսելու հետ, ապա՝ առաջին դեպ-  
քում ինչքան հացահատիկ է ի զուր տեղը կորչում, ինչ-  
քան է մնում հասկերի մեջ,—այդ յերբեք չի կարելի հաշ-  
վել: Իսկ կալսող մեքենան և՛ չի թողնում, վոր հացահա-  
տիկը կորչի, և՛ ամբողջապես հանում է հասկից, և՛ կա-  
տարվող աշխատանքն է մի քանի անգամ հեշտացնում:

Այդպես են բոլոր մեքենաները: Նրանք—անտեսու-  
թյան հատար ամենաողտակաբ բաներն են: Յեվ պետք է  
ամեն մի գյուղացի ձեռք բերեր նրանց: Սակայն թող մի  
փորձի ձեռք բերել: Առանձին անտեսության համար մե-  
քենաների զինը կծող է—թանկ է: Զի կարելի գնել, գյու-  
ղացու փողը չի հերիքի: Յեվ ահա, դուրս է գալիս, վոր  
գյուղացանտեսական մեքենաների ամբողջ ոգուտը պետք է  
ստանան միայն կուլակներն ու ունեվորները: Լավ բան  
է. խորհրդային իշխանությունն իր գործարաններում մե-

քենաներ պատրաստի, իսկ նրանցից գյուղական կուլակներն ու ունավորներն ոգտվին:

Բայց այստեղ ևս ոգնության ե հասնում կոոպերացիան: Լավ կազմակերպված կոոպերացիան կարող ե հեշտությամբ ոգնել գյուղացիությանն այս գործում: Ինչպես: Շատ հասարակ ձևով: Վերցնենք հետևյալ որինակը. կոոպերատիվի անդամները վորոշեցին մեքենաներ ձեռք բերել. այդ մասին հայտնեցին վարչության. հաշվեցին, գուրս յեկավ, վոր կոոպերատիվի վաստակից կարելի յե այդ գործին հատկացնել 500 ռուբլի: Միատեղ գնեցին մեքենաները: Կոոպերատիվին կից հիմնում են այսպես կոչված՝ վարձակայան: Այդ նշանակում ե, վոր ամեն մի անդամ կարող ե կայանից վարձով վերցնել մեքենան (շարքացան, հնձող, խոտհար) վորոշ ժամանակով, և ոգտվելուց հետո վերագարծնել նույն վարձակայանին, վորպեսզի հետևյալ գյուղը կարողանա նրանից ոգավել: Այդպիսով կոոպերատիվը մեքենաները մատչելի յե դարձնում և՛ աղքատ տնտեսությունների համար: Միաժամանակ պետք ե իմանալ, վոր մեքենաները կարելի յե ստանալ և՛ ապառիկ, և՛ կարելի յե այդ բանի համար փոխառություն ստանալ: Յեվ կոոպերատիվի գործունյա վարչությունը կարող ե այդ ամենը հեշտությամբ գլուխ բերել:

Այդ նույն ձևով ել կոոպերատիվը կարող ե հասարակական կալսող մեքենա սարքել: Նա կարող ե նմանապես կազմակերպել հասարակական հացահատիկ մաքրող կայան, դնելով այնտեղ և՛ քամհար, և՛ վորոմնահան մեքենաներ:

Այս ճանապարհով կարելի յե ել ավելի հեռուն գնալ: Այդ նպատակով բավականաչափ միջոցներ հավաքելուց հետո կոոպերատիվը կարող ե ձեռնարկել շոգեաղացի կառուցման, վորը կարող ե հացահատիկ աղալ ամբողջ շրջակայքի համար: Այս գործի համար կարող են միանալ

մի քանի կոոպերատիվներ և ընդհանուր ուժերով գլուխ բերել այդ՝ գյուղացիության համար կարևոր գործը:

Վերջին ժամանակներս Խորհրդային Միության մեջ շատ ուշադրություն ե դարձվում գյուղերին ելեքտրական ուժ մատակարարելու վրա. ելեքտրականությունը մի ուժ ե, վոր կարող ե լույս տալ գյուղական խրճիթին, և մեքենաներ բանեցնել, կարող ե և ուրիշ ոգտակար գործեր կատարել:

Արտասահմանում ելեքտրականության ոգնությամբ, ֆերմաներում մինչև անգամ լվացած սպիտակեղենն են արգուկում, այնտեղ հենց այդպիսի արդուկներ ել շինված են:

Ելեքտրական ույժն – ամենաեժան ուժն ե. նա ավելի եժան ե նստում, քան փայտը, ածուխը և մագուլթն ու նավթը: Յեվ նրա գլխավոր հարմարությունն այն ե, վոր նրանից կարելի յե առանց վորեվե դժվարության ոգնանից կարելի յե առանց վրա: Միայն դրա համար ավել հեռավոր տարածության վրա: Միայն դրա համար պետք ե մեծ ծախսեր անել ելեքտրական կայարան շինելու համար, վորտեղից կարելի լինի ելեքտրականություն ստանալ և այդտեղից ել բաշխել ամբողջ շրջակայքին:

Յեվ ահա, գյուղի ելեքտրոֆիկացիայի այս գործում չափազանց մեծ բան կարող ե անել կոոպերացիան: Արչափազանց մեծ բան կարող ե անել կոոպերատիվներ շինել են փոքրիկ դեն վաղուց մի քանի կոոպերատիվներ շինել են փոքրիկ ելեքտրոկայարաններ, որինակ՝ Սիբիրում այդպիսի կայարաններ ուներ Ստարո-Բարդինսկայա գյուղական արտելը: Վերներ ուներ Ստարո-Բարդինսկայա գյուղական արտելը: Վերներ կոոպերատիվներն ընդարձակ չափերով ձեռնարկում շինեցին մի մեծ ելեքտրոկայարան, վորն արդեն բացված շինեցին մի մեծ ելեքտրոկայարան գյուղացիական ե և ելեքտրական ուժ ե մատակարարում գյուղացիական տնտեսություններին: Կազմակերպված ե գյուղացիներին ելեքտրոկայարաններ շինելու գործում ոգնող ընկերություն, վորից միշտ կարելի յե այդ գործի համար փոխա-





Բայց 1922—23 թ.թ. կոոպերատիվներն սկսեցին ոգ-  
նության հասնել գյուղացուն մի փոքր այլ ճանապարհով:  
Նրանք սկսեցին փոխառվածություն տալ վոչ թե փողով,  
այլ մթերքով: Հատկապես զարգացավ սերմացու տալու  
յեղանակը: Գյուղացիական անտեսությունը սերմացվի  
կարիքը միշտ զգում ե ցանքից սուաջ: Յեվ ահա, կոո-  
պերատիվներն սկսեցին կարիքավորներին սերմացու տալ,  
բերքից հետո վերադարձնելու վորոշ պայմաններով: Ըստ  
մեծի մասին այդ հանգամանքը գյուղացիությունը քիչ ո-  
գուտ չավեց:

Այժմ Խորհրդային Միության Ժողովրդական անտես-  
ությունը վերականգնվում ե: Խորհրդային իշխանությունն  
այն հետևանքին հասավ, վոր փողը դադարեց անարժե-  
քանալուց, դադարեց՝ ինչպես ասում են, ընկնելուց: Ար-  
գեն դուրս են յեկել հնչյուն արժաթ դրամներ—տաս,  
տասնևեկինգ, քսան ու հիսուն կոպեկանոցներ և ուրբլիա-  
նոցներ: Խորհրդային չերվոնեցը և ուրբլին ամուր կեր-  
պով վտարի յին կանգնել՝ թերևս ավելի ամուր, քան ար-  
տասանմանյան վորևե դրամ—անգլիականը կամ Ֆրան-  
սիականը: Այս պայմաններում կրկին հնարավորություն  
ե ստեղծվում սուաջվտ նման փոխառվածություն տալ գյու-  
ղատնտեսությանը պարապողներին, վորոնք կարիք ու-  
նին: Յեվ կոոպերացիան արդեն կպել ե այդ գործին:  
Շատ սպառողական ընկերություններում այժմ հիմնված  
են հատուկ վարկային բաժիններ: Նրանց նպատակն ե  
ոգնություն գալ գյուղացիական անտեսությունը վարկով  
և փոխառվածությամբ՝ սերմացու, ձի գնելու և գյուղական  
այլ կարիքները հոգալու համար: Այդ նույն նպատակնե-  
րով ել այժմ մի քանի տեղ հիմնվում են վարկային ըն-  
կերություններ:

Խորհրդային իշխանությունը գյուղացիական անտես-  
ությունը վարկ տալու համար հիմնել ե հատուկ հիմ-



նարկություն—Գյուղատնտեսական Բանկ: Շատ նահանգ-  
ներում գոյություն ունին Գյուղատնտեսական վարկի  
հատուկ ընկերություններ: Յուրաքանչյուր լավ աշխատող  
կոոպերատիվ՝ այսինքն այնպիսին, վորին կարելի յե ա-  
ռանց յերկյուղ կրելու փող վստահանալ, կարող ե այդ  
հիմնարկություններից փոխառվածություն ստանալ, իսկ իբ  
հերթին՝ այդ գումարը փոխ տալ գյուղացիներին:

13. ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք աշխատեցինք այս գրքույկում թոուցիկ և հա-  
մառտ կերպով բացատրել, թե ինչ ոգուտ կարող ե բե-  
րել, և իրոք ինչ ոգուտ ե բերում կոոպերացիան գյու-  
ղացիական անտեսությունը: Մենք տեսանք, վոր համարյա  
ամեն տեղ սպառողական և ուրիշ տեսակի կոոպերացիան  
նպաստում ե գյուղացուն, միացնելով նրա ջանքերը  
մյուս գյուղացիների ուժերի ու միջոցների հետ՝ եժան  
գնով ապրանք ձեռք բերելու, քիչ շատ ձեռնտու գնելով  
գյուղացիական հում նյութերը վաճառելու նպատակով,  
նպաստում ե գյուղացիական անտեսությունը ոգտվելու  
մեքենաներից: Մենք կարող ենք, առանց կեղծելու ա-  
սել, վոր կոոպերացիայի՝ գյուղացիական անտեսությունը  
սոված ոգուտն իրոք շատ մեծ ե: Պետք ե միայն աշխա-  
տված ոգուտն իրոք շատ մեծ ե, լավ կազմակերպել կոոպե-  
տել, վորքան հնարավոր ե, լավ կազմակերպել կոոպե-  
րատիվ գործը: Մենք ցույց տվինք նույնպես, թե ամեն  
մի գյուղացի ինչ պետք ե անի, վորպեսզի լավացնի  
կոոպերացիան: Յուրաքանչյուրը, ով կը կարդա այս  
գրքույկը, պետք ե մտածի, թե ինչ մեծ ոգուտ կարող  
ե տալ կոոպերացիան գյուղացիական անտեսությունը:

Այն, ինչ վոր մենք պատմեցինք, այդ դեռ բոլորը  
չե: Գյուղացիական կյանքը դեռ շատ կողմեր ունի, վո-  
րոնց նկատմամբ նույնպես կիրառելի յե կոոպերացիան,  
և վորտեղ նա կարող ե վոչ պակաս մեծ ոգուտ բերել,  
և անգաղար բարե-  
Յեկեք, ուրեմն, անդադար հիմնենք և անգաղար բարե-

լավ ենք կոոպերատիվ կազմակերպությունները, յեկեք,  
 յեռանդով կպչենք կոոպերատիվ աշխատանքի: Մենք բո-  
 լորս պետք է հասկանանք, վոր այդ աշխատանքն առանձ-  
 նապես կարևոր է Նորհրդային իշխանութեան որոք: Բան-  
 վորադյուրացիական Պետութեան մեջ կոոպերացիան  
 դեպի աշխատավորութեան կյանքի վերջնական բարելա-  
 վումը տանող, դեպի սոցիալիզմ տանող ուղին է:  
 Հենց այդ պատճառով ել մեր աշխատանքն ա-  
 ռանձին նշանակութիւնն է ստանում:



ՎՐԻՊԱԿՆԵՐ

			Տպված է	պես է լինի
Նշ	3	վեր.	12	հիմնված
»	6	»	1	լծկաններ
»	6	ներք.	11	ամենը
»	22	վեր.	2	աւնալորներն ոգտվին
»	24	»	3	անտեսութուն
»	27	»	1	Հաճախ

ՀՀ Ազգային գրադարան  
  
 NL0209058



4155 ט 15 407.

